ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄԵԾԱԾԱՎԱԼ ԻՐԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎՃԱՐ LASAN - ի ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30, 2025 ԺԱՄԸ՝ 10:00

Los Angeles City Hall
John Ferraro Council Chamber
Room 340
200 North Spring Street
Los Angeles, CA 90012

Այս ծանուցումը հասանելի է տարբեր լեզուներով՝
lacitysan.org/mbifrates2025
կայքում

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵԲԻՆԱՐՆԵՐ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄԵԾԱԾԱՎԱԼ ԻՐԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լոս Անջելեսի Սանիտարական և Շրջակա Միջավայրի բաժինը առաջարկում է Zoom վեբինարներ առաջարկվող գների վերաբերյալ: Խնդրում ենք նախապես գրանցվել՝ ստորև նշված հղումով կամ QR կոդով: Հանդիպումները կսկսվեն նշված ժամին՝ ոչ ուշ:

Տեղեկատվական վեբինարները կձայնագրվեն և հասանելի կլինեն դիտման համար **lacitysan.org/mbifrates2025** կայքում:

Չորեքշաբթի, Օգոստոսի 27, 2025, ժամը՝ 18:00-ին
https://us02web.zoom.us/webinar/register/WN_GMvbWxR-R8ipZN6k9E6n1A

Շաբաթ, Սեպտեմբերի 13, 2025, ժամը՝ 10:00-ին
https://us02web.zoom.us/webinar/register/WN_rOv1a6KtRRyB459TZd8Sbg

Լոս Անջելեսի քաղաքապետարանը, որպես պաշտպանված կազմակերպություն ըստ <<Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների մասին օրենքի>> II հոդվածի, խտրականություն չի դնում հաշմանդամության վրա և ըստ պահանջի կտրամադրի պատճառաբանված հարմարեցում ապահովելով հավասար հասանելիություն իր ծրագրերին, ծառայություններին և գործունեությանը: Խնդրում ենք վեբինարից մեկ շաբաթ առաջ գրել sansrfrates2025@lacity.org էլ. հասցեին՝ Ձեզ անհրաժեշտ օգնությունը խնդրելու համար:

ԱՌԱՋԱՐԿ 218 - ԲՈՂՈՔԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Լոս Անջելես քաղաքը 2025 թվականի Սեպտեմբերի 30-ին, ժամը 10:00-ին,Los Angeles City Hall, John Ferraro Council Chamber, Room 340, 200 North Spring Street, Los Angeles հասցեում, կանցկացնի հանրային լսում՝ «Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի Վճարի» փոփոխությունների ընդունման և առաջարկվող վճարի դեմ ներկայացված բոլոր գրավոր բողոքները քննարկելու համար:

Հանրության անդամները կարող են մասնակցել և ելույթ ունենալ հանրային լսումներին կամ դիտել լսումները https://www.youtube.com/@LACityClerk կայքում: Հանրային լսումների ժամանակ բանավոր մեկնաբանությունները չեն կարող համարվել գրավոր բողոքներ:

Գրավոր բողոքները կարող են փոստով ներկայացվել City of Los Angeles, Office of the City Clerk, Election Division, 555 Ramirez St., Space 300, Los Angeles, CA 90012 հասցեով: Անձամբ ներկայացված գրավոր բողոքները պետք է հասցվեն Office of the City Clerk, Election Division, 555 Ramirez St., Space 300, Los Angeles հասցեով՝ հանրային լսումների ավարտից առաջ: Փոստով ներկայացված գրավոր բողոքները պետք է ստացվեն Քաղաքային Քարտուղարի գրասենյակի (Office of the City Clerk) կողմից լսումների օրը ոչ ուշ, քան ժամը 17:00-ին: Բոլոր գրավոր բողոքները պետք է ներառեն

1) բողոքը ներկայացնող սեփականատիրոջ կամ վարձակալի տպագիր ամբողջական անունը և բնօրինակ ստորագրությունը, և

2) հասցեն և հողատարացքի համարը (APN): Դուք պետք է ստուգեք և տրամադրեք ճիշտ հողատարացքի համարը (APN-ը), քանի որ այս նամակում նշվածը կարող է սխալ լինել: Դուք կարող եք ոգտագործել այս թերթիկը որպես գրավոր բողոք և այն ուղարկել Քաղաքային Քարտուղարին (City Clerk):

Ես՝ _____ բողոքում եմ Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի առաջարկվող
(Տպագիր անուն, ազգանուն)
վճարի բարձրացման դեմ:

Հողատարացքի Համարը (APN)՝ _____ սեփականատերն եմ ☐ վարձակալն եմ ☐

Գույքի հասցեն՝ _____

Ստորագրություն՝ _____

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄԵԾԱԾԱՎԱԼ ԻՐԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՈՐ ՎՃԱՐՆԵՐ

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելես Քաղաքը վերջի 17 տարվա ընթացքում առաջին անգամ առաջարկում է բարձրացնել Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի վճարը:

Առաջարկվող վճարի բարձրացումը անհրաժեշտ է մեծածավալ իրերի հավաքման ծառայությունը գործարկելու համար, որը նպաստում է մաքուր համայնքների և ախտոտվածության նվազեցման ապահովմանը:

Քաղաքի Կոշտ Ռեսուրսների վճարին չենթարկվող բազմաբնակարան շենքերի սեփականատերերին, վարձակալներին և բնակիչներին, ուղարկվել է այս ծանուցումը՝ տեղեկացնելու Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի առաջարկվող վճարների, նախատեսված տեղեկատվական վեբինարների և հանրային լսումների մասին, որտեղ Լոս Անջելեսի Քաղաքային Խորհուրդը կքննարկի նոր սակագների ընդունումը:

Այս վճարը ներառված է Ձեր Լոս Անջելեսի Ջրամատակարարման և Էլեկտրաէներգիայի Դեպարտամենտի (LADWP) կոմունալ վճարի մեջ և հանդիսանում է Քաղաքի «Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի Հավաքման Ծրագրի» ֆինանսավորման աղբյուրը: Վճարները ֆինանսավորում են Լոս Անջելես Քաղաքի կողմից մեծածավալ իրերի հավաքման ծառայությունները բազմաբնակարան շենքերից, ինչպիսիք են կահույքի, ներքնակների ու կենցաղային տեխնիկայի հավաքումը, տեղափոխումը, վերամշակումը, և/կամ հեռացումը:

Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի Առաջարկվող Նոր Վճարներ

Բազմաբնակարան շենքերը, որոնց Քաղաքը տրամադրում է մեծածավալ իրերի հավաքման ծառայություններ, չեն վճարում Քաղաքի Կոշտ Ռեսուրսների համար նախատեսված վճար:

Յուրաքանչյուր սեփականատեր պատասխանատու է իր բնակարանի Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի վճարի համար, եթե բնակարանը միացված է գլխավոր էլեկտրական հաշվիչին (էլեկտրական հաշվիչ, որը չափում է մեկից ավելի բնակարանների էլեկտրաէներգիայի օգտագործումը):

Եթե բնակարանն ունի առանձին էլեկտրական հաշվիչ (էլեկտրական հաշվիչ, որը չափում է միայն մեկ բնակարանի էլեկտրաէներգիայի օգտագործումը), Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի վճարը հավասարապես բաժանվում է բնակարանի սեփականատիրոջ և բնակչի/վարձակալի միջև: Բնակարանի սեփականատեր է համարվում բազմաբնակարան շենքի սեփականատերը, եթե բազմաբնակարան շենքում առանձին սեփականատերեր չկան:

Ամսեկան առաջարկվող վճարները յուրաքանչյուր բնակարանի համար ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՄԵԾԱԾԱՎԱԼ ԻՐԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՈՐ ՎՃԱՐՆԵՐ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԱՇՎԻՉԻ ՏԵՍԱԿԸ	ԸՆԹԱՑԻԿ	ԱՇՈՒՆ 2025	ՀՈՒԼԻՍ 2026	ՀՈՒԼԻՍ 2027	ՀՈՒԼԻՍ 2028	ՀՈՒԼԻՍ 2029
Մեծածավալ Իրերի Վճար - Առանձին ջրաչափով բնակարանի բնակիչ/վարձակալ (յուրաքանչյուր բնակարանի համար)	$0.64	$1.52	$1.57	$1.60	$1.64	$1.67
Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի Վճար - Առանձին ջրաչափով բնակարանի սեփականատեր (յուրաքանչյուր բնակարանի համար)	$0.64	$1.52	$1.57	$1.60	$1.64	$1.67
Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի Վճար - գլխավոր ջրաչափով բնակարանի սեփականատեր (յուրաքանչյուր բնակարանի համար)	$1.11	$3.04	$3.13	$3.20	$3.27	$3.34
Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի Վճար - Առանձին ջրաչափով բնակարանի բնակիչներ/վարձակալներ, ովքեր իրավասու եք ցածր եկամուտ ունեցողների օգնության ծրագրին (31.25% զեղչ) (յուրաքանչյուր բնակարանի համար)	$0.44	$1.05	$1.08	$1.10	$1.13	$1.15

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք համապատասխանում ե՞ք Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի վճարի համար 31.25% զեղչ ստանալու պայմաններին:

Ցածր եկամուտ ունեցող հաճախորդները, ովքեր իրավունք ունեն օգնություն ստանալու, կարող են ստանալ 31.25% զեղչ Բազմաբնակարան Շենքերի Մեծածավալ Իրերի վճարի համար: Lifeline-ի հաճախորդները կարող են 100% ազատվել վճարից: Այս ֆինանսական օգնության ծրագիրը կշարունակվի առաջարկվող սակագների ընդունման դեպքում:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք lacitysan.org/mbifrates2025 կայքը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

Այցելեք lacitysan.org/mbifrates2025 կայքը, գրեք մեզ sansrfrates2025@lacity.org էլ. հասցեով կամ զանգահարեք 1-800-773-2489 հեռախոսահամարով՝ ժամը 7:30-ից մինչև 17:30-ը:

environment LA SANITATION CITY OF LOS ANGELES
zero waste • zero wasted water